

ՀԵՏԱՔՐԹԻՐ Ա.ՐՏՈՆԱԴԻՐՆԵՐ

Ներկայ արտօնապիրներէն մին, այսինքն առաջինը, որ արարերէն է, տրուած է մասնաւորապէս սուրբիացի քրիստոնեայ արարներուն համար : Դժբաղղաբար անոր թուականը չկրցի ճշտել սակայն շատ հաւանական է որ ան՝ Սուրբիայի ժամանակակից ապա մահամետական) օրով տրուած ըլլայ, Արդէն յիշեալին վայրագութիւններն ու բարբարոսութիւնները յայտնի են պատմութենէն, ուստի այս հաւառվ նա պէտք է տրուած ըլլայ 1780-90ին ժամանակները :

Իսկ երկրորդը՝ զրեթէ միեւնոյն եւ կամ քիչ մ'ալ վերջին ժամանակներու գործ է :

Ա ր ա բ ե ր է ն ի ը ն դ օ ր ի ն ա կ ու թիւն ը

Եա լազիս էլ լիպասի էլ գաթրանի ուա համիլ էթթան էշ-շէյթանի էլ մէլ՛ուն մին էլր ապա բանմանի ուալէճըլ տէֆն ճէսէթ հէղէ էլ քափըր էլ նասրանի ֆի հըղուան մին նէթէնիթէ քա՛տ ու իթիա՛թ յէֆ էլ բուխութ պի տէֆնիյէ եա էյեռունէ էլ խորի ալ քափըր էլ խընդրու :

(Թարգմանութիւն)

«Դուն որ սեւ հաղուստ ու սառանայի գդակը կը կրես, միև Աստուծոյ անիծեա՛լը, կը յանձննենք այս արտօնութիրը հեթանոս խող քահանային՝ թաղելու համար հոտան ամբարիչտ քրիստոնէին դիակը ու

Տ ա ճ կ ե ր է ն ի ը ն դ օ ր ի ն ա կ ու թիւն ը

Եա լազիս էլ լիպասի էլ գաթրանի նէուզիպիլան քիւլանի շէյթանի գօնա փախաղ սէն սին քի, Ա սիթէնիզտէն պիրիսի միւրա օլմուշ անըն լաշէի քէրինէսինի զէմին դապուլ էյլէմէղ իսէ տէ՛ շէհիրտէն թաշրապէիր հէնտէք գաղարաթ իշինէ աթըզ կէլէ կիտէսինիզ :

(Թարգմանութիւն)

«Դու որ սեւ հազուստ եւ սատանայի գդակը կրող ծեր քահանա մըն ես, ձեր ժողովրդէն մին սատիեր է անոր մեղաւոր գիակը, որ մինչեւ իսկ զետինը չընդունիր, քաղաքէն դուրս փոս մը փորելով մէջը նետեցէք եւ եկէք :

*

ՎԱՃՏԱԿ